հրեաները դեռ 1492 թվականին։ Իսկ Ֆիրմեն Տիտոն կը նշե, որ Յասեֆի որդի Օրիոնը 1490-ին Կ. Պոլսո մեջ գրած է «Եբրայեցիներու պատմությունը»։ Մաքսուրիզատեն «Նեթայիճյուլ վուքուաթ» (Դեպքերու հետևանքը) անունով իր երկին մեջ կը խոսի, թե արաբական տառերով գիրքեր տպագրելու և աղոնք առանց մաքսատուրքի Թուրքիա մտցնելով, ծախելու համար, 1587 թվականին սուլթան Մուրադ Գ-ի կողմե հրովարտակ մը հանձնված է օտարականի մը։ Այդ հրովարտակը ստացող Պրանթոն Պանտինի և Օրացիո Պանտինի անվանակոչյալ երկու վաճառական եղբայրներ, առաջին անգամ Թուրքիա մտցուցած են «Էօքլիտեսի» (Էվկլիդես) արաբերեն թարգմանությունը՝ 1594-ին Հռոմ տրպագրված «Էօքլիտեսի երկրաչափություն» («Թահրիր-ուլ Էօքլիտես ֆի ուսուլ'իլ հենտեսե»)։ Սուլթան Մուրադ Գ-ի նշված հրովարտակն ալ իր մեջ պարունակող այս գիրքը վաճառքի հանված է Կ. Պոլսո մեջ։

Հրեաները, որոնք առաջին տպարանները հիմնած են 1483-ին Կ. Պոլսո, 1515-ին Սելանիկի և 1534-ին Ադրիանապոլսի (Էդիրնե) մեջ, 1495 թվականեն ի վեր այս տպարաններուն մեջ լույս ընծայած են եբրայերեն լեզվով «Աստվածաշունչ»-ը, մեկնություններ և քերականության դասագիրքեր։ Ծանոթ է, որ եբրայատառ առաջին «Աստվածաշունչ»-ը է. Կ. Պ. Մոզիոյի կողմե տպագրված է 1547-ին Կ. Պոլսո մեջ։

Հրեաներեն հետո հայերն ու հույներն ալ տպարաններ հիմնած են Թուրքիա։ Մասնավորաբար հայերը այս մարզին մեջ չեն բավարարված միայն իրենց մշակույթի զարգացման նպաստելու ջանքեր կիրառելով, այլ միևնույն ատեն նպաստած են Թուրքական տպագրության և ամբողջ երկրի մշակույթի զարգացումին։ Նկատի առնելով այս հանգամանքը, մեր փափագն է համառոտ կերպով ներկայացնել Օսմանյան կայսրության հպատակ հայերու կատարած գործունեությունը տպագրության բնագավառին մեջ, որը բավականին լայնորեն հետազոտված է մեր կողմե։

Թուրքիո մեջ տպագրության նախակարապետը հանդիսացող Աբգար Դպիր Եվդոկիացին (Թոխաթցի) 1562 թվականին էջմիածնի Միքայել Սեբաստացի կաթողիկոսին կողմե Հռոմ ուղարկված պատվիրակության նախագահն էր։ Հայ թագավորներեն Սենեքերիմի սերունդեն Աբգարը, որը Պիոս Դ պապեն և Վենետիկի դուքս Հերոնիմոս դոժեն արտոնություն ստացավ հայերեն գիրքեր տպելու, առաջին անգամ 1565-ին իր լույս ընծայած «Սաղմոսարան»-ը ձոնեց պապին։ Հետո իր որդի Սուլթանշահի հետ մեկտեղ տպագրական մեքենաներն ու կապմածներն առնելով՝ գնաց Կ. Պոլիս, ուր ձերբակալվեցավ։ Որոշ ատեն